

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ
ՍԵՎԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հեքիաթը Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ գրավում է ուրույն տեղ և նրա սիրած ժանրերից է: Հեքիաթագիր Հ. Թումանյանը նույնքան մեծ է, որքան բանաստեղծ Հ. Թումանյանը: Նրա հետաքրքրությունը ժողովրդական հեքիաթների և դրանց մշակման նկատմամբ սկսվել է իր ուսուցիչ և մեծ ընկերակամ Ղ. Աղայանից: «Աղայանից հետո և նրա ազդեցությամբ միայն հետագայում սկսվեց ժողովրդական հեքիաթների գրական-գեղարվեստական մշակումը (Թումանյան, Իսահակյան)»¹: Իսկ դա (ժողովրդական հեքիաթների գրական-գեղարվեստական մշակումը) ենթադրում է գեղարվեստական ստեղծագործության մեջ ժողովրդի բանավեպի ընտիր նմուշների ներթափանցում, միահյուսում, հարստացում: «Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում,— գրել է Հ. Թումանյանը իր «Ուլ-դրական ոչնչությունները քննադատ» հայտնի հոդվածում,— այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհիվ հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան ի՞նչը փոխեն, ի՞նչը դուրս գցեն, ի՞նչը պահեն, ի՞նչ լեզվով, ի՞նչ ոճով ու ինչպե՞ս պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»²: Հենց այդ պատճառով, ձեռնարկելով որևէ հեքիաթի մշակմանը, Հ. Թումանյանը հավաքել է վերջինիս բազմաթիվ տարբերակներ, ըստ որում՝ ոչ միայն հայկական, այլև ուրիշ ժողովուրդների բանահյուսության նմուշներ և դրանց նկատմամբ հանդես բերելով յուրովի մոտեցում, հյուսել է որակապես նոր, ավելի կատարյալ, գոյություն ունեցող պատկերներ: Խոսելով իր ծրագրած «Հազարան բլուզ» հեքիաթի մասին՝ Հ. Թումանյանը գրում է. «Դրանով հետաքրքրվելով, գտա, որ շատ անգամ տպված է, բոլոր ազգերն ունեն, պատմված է հազար ու մի ձևով, մինչև անգամ գիտնականները մեկնություն են տվել, թե գարնան գալն է հեքիաթի առարկան, բայց այդ բոլորից հետո ես ոչ միայն թողի իմ հեքիաթը, այլ ավելի պինդ բռնեցի, ավելի ոգևորվեցի այդ նյութով...»³:

Ուսումնասիրելով Հ. Թումանյանի արխիվը՝ տեսնում եմ, որ հեքիաթների մշակման վրա աշխատելիս նա հանդես է եկել ո՛չ միայն որպես տաղանդավոր գրող, այլև որպես պրպտող մտքի տեր գիտնական-բանասեր: Նյութն ըստ հնարավորին լրիվ և բազմակողմանի ուսումնասիրելու համար նա կարդում է համապատասխան գրականություն, փորձում բացատրել հեքիաթներում հանդես եկող այս կամ այն դրվագը՝ դիմելով հին հունական

¹ Ա. ս. Ասատրյան, Ղազարոս Աղայան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1940, էջ 97:

² Հ. ս. Գ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 96:

³ Նույն տեղում, հ. 5, Երևան, 1945, էջ 158:

դիցաբանությունը: Դրանում համոզվում ենք ուսումնասիրելով «Մաղիկի հեքիաթի» ստեղծագործական պատմությանը վերաբերող՝ Հ. Թումանյանի արխիվի անտիպ նյութերը⁴, որտեղ մեծ գեղարվեստագետը զուգահեռներ ու տարբերություններ է բացահայտում այս հեքիաթի՝ հայ և ուրիշ ժողովուրդների մոտ տարածված տարբերակների միջև, բերում դրանց առանձին դրվագների համառոտ բովանդակությունը, զուգադրում դրանք և մտորում դրանց շուրջ:

Հ. Թումանյանին խիստ մտահոգել է հեքիաթի վերնագրի ընտրությունը: Նա ձգտել է, որպեսզի խորագիրն ըստ հնարավորին լիակատար արտահայտի հեքիաթի բուն էությունը: Այսպես՝ հիշյալ հեքիաթն առաջին անգամ տպագրվել է «Հասկեր» մանկական ամսագրի 1911 թ. 8/9 միացյալ համարում «Եղեմական ծաղիկը» վերնագրով, իսկ արդեն 1913 թ. Պոլսի «Մեղրագետ»-ում (առաջին դասարանի համար կազմված դասագիրք) և 1917 թ. Թիֆլիսի «Լուսաբեր»-ում (հինգերորդ դասարանի համար կազմված դասագիրք) այն վերնագրված է՝ «Մաղիկի հեքիաթը»: Ինչպես պարզվում է անտիպ նյութերից, Հ. Թումանյանը այս հեքիաթի կապակցությամբ ուսումնասիրում է վերջինիս բազմաթիվ տարբերակները և հանգում այն եզրակացության, թե ամենայն հավանականությամբ, հեքիաթի մի տարբերակը «Ազամա ծաղիկը» խորագրերը սխալ կլինի. ճիշտը «Եղեմա ծաղիկը» խորագիրն է⁵:

Քիչ անց նա նորից անդրադառնում է այս հեքիաթի վերնագրին, գտնելով, որ «Цветок Адама»-ն պիտի ունենար «Цветок Эдема» («Եղեմական ծաղիկը») վերնագիրը, քանի որ Ադամը հեքիաթի հերոսի անունն է միայն և նրանով չէ, որ բնորոշվում է հեքիաթի կախարդական ծաղիկը⁶: Այնուամենայնիվ, հեքիաթն առաջին անգամ «Եղեմական ծաղիկը» վերնագրով լույս ընծայվելուց վեց տարի հետո, 1917 թ. Հ. Թումանյանն այն վերջնականապես անվանում է «Մաղիկի հեքիաթը» և այլևս փոփոխության չի ենթարկում⁷:

Հ. Թումանյանին զբաղեցրել է նաև «Քաջ Նազար» հեքիաթի վերնագրի ընտրության հարցը: Մի սեպտեմբեր անտիպ պատառիկում⁸ նրա ձեռքով տրված են այս հեքիաթի վերնագրի մի քանի տարբերակներ, որոնք այս կամ այն կերպ արտահայտում են Հ. Թումանյանի վերաբերմունքն իր հանրահայտ հերոսի նկատմամբ. «Ճպուռոտ Նազարը», «Խլնքոտ Նազարը» (արհամարհական), «Հսկա Նազարը», «Հերոս Նազարը» (հեգնական երանգներով), ի վերջո կանոնադրված հեքիաթի՝ «Քաջ Նազար» անվանման վրա:

Այս ձեռագրում Հ. Թումանյանը բերել է նաև «Անհաղթ հերոս Քաջն Նազար», Որ մին զարկի, ջարդի հազար» երկտողի թուրքական և վրացական տարբերակները:

⁴ Գրականության և արվեստի թանգարան, Հ. Թումանյանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ ԹԱ), № 133:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Ի դեպ, Հ. Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակության համապատասխան հատորի ծանոթագրություններում չեն արտացոլված այս հեքիաթի վերնագրի փոփոխությունները, և հիշյալ գրքում այն կրում է «Եղեմական ծաղիկը» խորագիրը, որ ճիշտ չէ (Հո վ հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1949):

⁸ ԳԱԹ ԹԱ, № 129:

«Թուրք <ական> վար <իանտ>.— Մահակի ծերին գրել է տալի.

«Աղա նաղար,
Հար վուրանդա դրխի ազար»;
(Աղա նաղար,
Ամեն զարկելիս՝ ջարդում է քառասունին):

Վրաց <ական>.

«Չեմի սախելի արի Փասիա
էրթի կուլաշի մոկլա ասիա»;
(Իմ անունն է Փասիա,
Մի դարկով ջարդում եմ հարյուրին):

Այստեղ տրված են նաև հիշյալ հրկտողի թումանյանական մշակումները.

«էստեղից անցավ խնքոտ նաղար,
Որ մի դարկելով՝ փռում է հազար»;

Նույն անտիպ պատառիկը ցույց է տալիս, որ սա չի բավարարում Հ. Թումանյանին, և նա այս հրկտողի մշակման հաջորդ փուլում ավելի է շեշտում հեգնական վերաբերմունքն իր հերոսի նկատմամբ ու կերպարին տալիս է կոմիկական «հերոսականության» երանգավորում.

«Հե՛յ, մերդ մեռնի, իսկ <նքոտ> նաղար,
Որ մի զարկելով՝ փռում է <ես> հազար...»:

Սակայն. սա ևս ենթարկվել է հետագա մշակման և բյուրեղանալով, ստացել բոլորին հայտնի իր դասական ձևը:

Ինչպես պարզվում է Հ. Թումանյանի արխիվում գտնվող մի ձեռագիր թերթից⁹, այս հեքիաթի վրա աշխատելիս նա ձեռքի տակ ունեցել է իրեն հայտնի բոլոր աղբյուրները, որոնցից վերցրել է այս կամ այն դրվագը՝ լրացնելու հեքիաթի հենքը՝ «Դժիկոն»¹⁰, «Քաջ նաղար»-ի՝ իր լավագույն հեքիաթներից մեկի մասին, խստապահանջ արվեստագետը գրել է. «Իմ կարծիքով՝ ես միայն մի հեքիաթ եմ մշակել կարգին (գուցե չնչին պակասություններ ունենա, ով գիտի), և դա «Քաջ նաղարն» է»¹¹:

Քննենք հեքիաթների զեղարվեստական մշակման կապակցությամբ Հ. Թումանյանի կատարած աշխատանքը մի որոշակի բնագրի՝ «Կոնատ աղջիկը» հեքիաթի վրա: Հ. Թումանյանի արխիվում պահվում է այս հեքիաթի տարբերակների մինչև այժմ չհրապարակված ձեռագիրը¹², Թերթերը վերից վար բաժանված են երկու մասի, յուրաքանչյուր էջի ձախ կողմի սյունակում գրի է առնված հեքիաթի ամբողջական բնագիրը՝ «Косоручка» վերնագրով¹³, աջում՝ առանձին տարբերակներից¹⁴ հատվածներ:

⁹ ԳԱԹ ԹԱ, № 145:

¹⁰ Գ. Սրվան ձեռյանց, Համով-հոտով, Թիֆլիս, 1904:

¹¹ Հ. Թ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 472:

¹² ԳԱԹ ԹԱ, № 125:

¹³ А. л. Н. Афанасьев, Народные русские сказки, т. 2, М., 1897.

¹⁴ Դրանք են՝ «Косоручка»-ի տարբերակները՝ а, б, с, ինչպես նաև թաթարական «Գուլիշի

Համադրենք այս տարբերակները և տեսնենք, թե ինչ ուղիով է ընթացել
2. Թումանյանը:

Տարբերակներում, հենց սկզբից, շեշտվում է հարսի շար, դաժան լինելու հանգամանքը.

«Ախպերն ամուսնանում է, մի վհուկ, շար, կախարդ կին է ուզում»¹⁵,

«Սա մի շար կին է ունենում...»¹⁶:

2. Թումանյանը փոքր-ինչ հեռանալով դրանցից՝ հեքիաթն սկսում է անկողմնակալ, հանդարտ, պատմողական եղանակով.

«Ախպերը պսակվում է, կնիկ է բերում»¹⁷:

Քրոջ, եղբոր և հարսի հարաբերությունները սկզբում պատկերված են այսպես.

«Առավոտը խանութ գնալիս, քոջն ասում է.

— Քույրիկ, լավ մտիկ տուր տանը:

Կինը նախանձում է ու բարկանում, թե ինչու մարդը քոջն է ասում»¹⁸.

2. Թումանյանի ձեռքի տակ եղած բազմաթիվ տարբերակներից մեկում սկիզբը տրված է այսպես.

«Ախպերը տուն է դալի, տասը խնձոր բերում, հինգը տալիս է քրոջը, հինգը իրեն ու կնոջն է թողնում: Դրանից է կինը վշտանում:

Մաղիկ է բերում—կնոջը թողնում, քրոջն է տալիս»¹⁹:

Կամ՝

«Ախպերը տեղ գնալիս քրոջը հարցնում է, թե ինչ տեսակ կտոր է ուզում սիրտդ, որ առնեմ քեզ համար:

— Ամենալավը:

Կինը սրանից սաստիկ վշտացավ»²⁰:

Ինչպես տեսնում ենք, բերված տարբերակներում կարծեք արդարացիում է հարսի տրամադրվածությունը գեղեցիկ ու բարի լուսիկի դեմ: Իսկ ահա թե ինչպես է վերափոխվել այս հատվածը 2. Թումանյանի գրչի տակ.

«Սա տեսնում է, թե ինչպես ամենքը սիրում են լուսիկին, ու նախանձը, օձի նման, բուն է դնում սրտի մեջ: Սկսում է լուսիկին բամբասել ու լացացնել ամեն օր, ամեն օր...

Ախպերը ամեն կերպ աշխատում է ուրախ պահի քրոջը: Մին տուն է գալիս՝ հետը ծաղիկ է բերում նրա համար, մյուս օրը միրգ, մի ուրիշ անգամ հագուստ»²¹:

Ուրեմն՝ եղբոր ամենօրյա նվիրատվությունները քրոջը արվում են նրան կնոջ վիրավորանքներից պաշտպանելու և ո՛չ գերադասելու համար, և ընթերցողի համակրանքն ու կարեկցանքը անվերապահորեն լուսիկի կողմն է:

խանում», հայկական «Անբախտ Մարիամը», Գրիմի եղբայրների «Безручка» հեքիաթները և սերբական ժողովրդական «Сестра и братья» ավանդությունը:

15 ԳԱԹ ԹԱ, № 125, էջ 1:

16 Նույն տեղում:

17 Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 162:

18 ԳԱԹ ԹԱ, № 125, էջ 1:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում:

21 Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 162:

Հեքիաթի բանահյուսական, ամբողջական բնագրում եղբայրը կեսգիշերին արթնացնում է քրոջը և հորդորում նրան եկեղեցի գնալ, իբր պատարագ լսելու: Քրոջ առարկությունների հանդեպ՝ թե դեռ վաղ է և տոն օր չէ, եղբայրն անհողդողդ է մնում և նրան կառք նստեցնելով, տանում է քաղաքից դուրս, թավ անտառը: Ճանապարհին կառքը դեմ է առնում մի թփի, և մինչ քույրը՝ եղբոր խնդրանքով, հրում-աղատում է կառքը և ձեռքը մեկնում է, որ նորից նստի, եղբայրը դատարկից կտրում է քրոջ ձեռքը և նրան թողնելով վայրի անտառում միայնակ ու վիրավոր, փախչում հեռանում է նրանից²²:

Մինչդեռ Մանրախոտ Մարիամ-ի տարբերակում վերաբերմունքն ավելի հումանիստական է: Այստեղ պատիժը պիտի իրագործեն բոլորովին օտար մարդիկ՝ հովիվները, որոնք, անսալով Մարիամի խնդրանքին՝ թողնել իրեն բախտի քմահաճույթին, չեն սպանում նրան, միայն, որպես նշան, հենց Մարիամի առաջարկությամբ, կտրում են նրա ձեռքերը և տանում²³:

Մի կողմ թողնելով ամբողջական բնագրի ակնհայտորեն ձգձգված և ոչ-դեղագիտական հատվածը, որտեղ քրոջ նկատմամբ պատիժը կանխամտածված ձևով և ամենայն սառնասրտությամբ ի կատար է ածում հարազատ եղբայրը, Հ. Թումանյանը կանգ է առնում երկրորդ տարբերակի վրա, լուսիկի ձեռքերը կտրելու վճիռը թողնելով դատարանին: Հ. Թումանյանի գրչի տակ այս հատվածը դառնում է հուզական, լարված, դրամատիկ (նաև՝ շնորհիվ ռատաստան է պահանջում» բառերի կրկնության):

Մեղավորը լուսի հետ աշխարհքով մին լուրը տարածվում է: Ժողովուրդը վրդովվում է, դատաստան է պահանջում, մայրը լալիս է, դատաստան է պահանջում, ու գեղեցիկ լուսիկին քաշում են դատարանի դուռը: Դատում են, վճռում, կոնքերը կտրում են ու էնպես, կոնատ, տանում, հեռացնում, կորցնում են հեռու, հեռու անտառներում²⁴:

Ամբողջական բնագրում լքված ու վիրավոր քույրը անտառից դուրս գալով, հասնում է մի քաղաք, մի վաճառականի տան մոտ ողորմություն է խնդրում: Սրա միակ տղան սիրահարվում և ամուսնանում է նրա հետ²⁵:

Մի այլ տարբերակում եղբայրը քրոջը տանում է և բաց թողնում թագավորի այգում: Քաղցից ստիպված՝ քույրը գաղտագողի ուտում է այգու խնձորներից: Թագավորի որդին հետևում և բռնում է իր սիրելի խնձորենու պտուղները հափշտակողին, բայց գերվելով նրա գեղեցկությունից, սիրահարվում է և ամուսնանում հետը²⁶:

Անտիպ պատառիկների քննությունը ցույց է տալիս, որ այս հատվածները համարելով պրոզայի և ոչ հավաստի (որովհետև գեղեցիկ և հպարտ լուսիկը չէր կարող մուրացկանություն կամ գողություն անել), Հ. Թումանյանը նախապատվություն տվել է մի այլ տարբերակի, որն օգտագործել է գրեթե նույնությամբ, տեղ-տեղ՝ բառացի²⁷:

22 ԳԱԹ ԹԱ, № 125, էջ 2—3:

23 Նույն տեղում, էջ 3:

24 Հոսի. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 163:

25 ԳԱԹ ԹԱ, № 125, էջ 4:

26 Նույն տեղում, էջ 3, 14:

27 Նկատենք, որ ծառի վրա ապաստան գտած աղջկա և թագավորի որդու հանդիպման տեսարանը հիշեցնում է Հ. Թումանյանի «Գառնիկ ախպեր» հեքիաթի համապատասխան հատ-

«Մի անգամ էդ անտառը որսի է գալի թագ<ավորի> որդին: Շները (հոտն առնում են) գտնում են աղջկանը, շրջապատում են ծառն ու սկսում են հաշել: «Երևի գազանի հետք են գտել»,— մտածում է թագ<ավորի> որդին ու սկսում է հիս անել:

— Հիս մի՛ անիլ ինձ վրա, թագ<ավորի> որդի,— ձեն է տալի աղջիկը,— ես մարդ եմ, գազան չեմ:

— Դե դուրս արի փչակից,— կանչում է թ<ագավորի> որդին:

— Չեմ կարող, մերկ եմ:

Թագ<ավորի> որդին իջնում է ձիուց, իր վերարկուն գցում է նրան (որ մերկ տեսնում է, ուշքից գնում է): Հագնում է, դուրս գալի: Թագ<ավորի> որդին թաքուն բերում է իր սենյակը, պահում իրեն մոտ ու տանը նստում, էլ դուրս չի գալի²⁸:

Հետաքրքիր կողմեր ունի նաև Լուսիկի ոսկեզանգուր երեխայի ծնունդն ավետող նամակի դրվագի մշակման պատկերը: Ամբողջական, անտիպ բնագրում այն ներկայացված է հետևյալ կերպ.

«Հերն ու մերը էնպես ուրախանում են, Լյուլես ուրախանում են, աշխարհքովը մին են ըլում: Իսկույն իրանց որդուն նամակ են գրում ու ղրկում մի ծերունու հետ: Էս բանը իմանում է հարսը. ծերունուն կանչում է.

— Արի՛,— ասում է,— պապի՛, մի քիչ հանգստացի, հոգնել ես:

— Չէ՛, ժամանակ չունեմ, ինձ վռազ են ղրկել:

— Բան չկա, արի՛, հանգստացի՛, մի քիչ հաց կեր:

Տարավ, ծերին նստեցրեց ճաշի վրա, իսկ նրա խուրջինը (պայուսակը) դուրս է տանում, նամակը հանում է, կարդում, մանր-մանր պատահոտում ու մի ուրիշը գրում, թե՛ քու կինը մի երեխա է ծնել—կեսը շուն է, կեսն՝ արջ, անտառներում գազանների հետ է ապրել:

Տանում է ծերը էս նամակը, տալի վաճառականի տղին: Խեղճ տղեն կալդում է ու լաց է լինում: Նամակ է գրում, թե մինչև իմ գալը ձեռ չտաք, ես կգամ, կտեսնեմ՝ էդ ինչ երեխա է:

Ահա դարձյալ կանչում է ծերին էն վհուկը:

— Արի՛,— ասում է,— պապի՛, հանգստացի՛:

Ներս է տանում, ինչ է ասում, ինչ չի ասում, դարձյալ պայուսակը դուրս է տանում, նամակը հանում, կարդում, պատռում, ուրիշը գրում, դնում տիղը, գրում է, թե՛ էս նամակը տուն հասնելուն պես պետք է որ էլ մեր տանը չլինի²⁹,

Սի ալլ տարբերակում.

«Այնպես եղավ, որ նամակատարն անցնում էր էն քաղաքից, որտեղ վաճ<առականի> որդին էր: Փոթորիկ է վեր կենում, ու նամակատարը մտնում է էն տունը, որտեղից դուրս էր եկել իրենց թագավորի տղի կինը: Հարսը

վածքը Հետաքրքիր է այն հանգամանքը, որ երկու տարբեր սյուժեների համար ընդհանուր մանրամասները Հ. Թումանյանի մոտ առաջացնում են ասոցիատիվ մտահանգումներ, և չնայած նա «Գառնիկ ախպերը» դրել է այս հեքիաթի վրա աշխատելուց երեք տարի առաջ՝ 1905 թ., բայց հեղինակի գեղարվեստական մտածողությունն ընթացել է նույն հունով, շնորհիվ նրան համակած համանման տրամադրությունների ու տպավորությունների:

28 ԳԱԹ ԹԱ, № 125, էջ 4:

29 Նույն տեղում, էջ 5—5ա:

րաղնիքը տաքացնում է, հյուրին բաղնիք դրկում, ինքը նամակը փոխում է, գրում է, թե՛ բու կինը մի միրուքավոր է՞ծ է ծնել»³⁰:

Ըստ Գրիմի եղբայրների հրատարակած տարբերակի, որի անտիպ թարգմանությունը ևս առկա է Հ. Թումանյանի ձեռագրերում, նույն դրվագն այս տեսքն ունի. «Նամակը սատանեն է փոխում, որ կնոջն սպանեն, աչքերն ու լեզուն պահեն: Մերը մեղքանում է—մի եղջերու է սպանում, լեզուն ու աչքերը պահում, իսկ հարսին—երեսին շալակը տալի, դուրս անում»³¹:

Անտիպ պատահիկների մեջ կան այդ նույն դրվագի նաև հետևյալ տարբերակները. «...խորթ մերը (ֆրանգ) թագուհին որ գլխի է ընկնում, հարեցնում է թագավորի» որդուն, նրա կնիքը հանում ու նրա կնիքով նամակ դրում հորն ու մորը, թե ինքը իմացավ որ իր կինը մի պոռնկի աղջիկ է. նամակն ստանալուն պես իրեն էլ ոչնչացնեն, իր ծնած երեխաներին էլ» («Անբախտ Մարիամ») ³²:

«Նամակատարը գիշերը քնում է եղբոր տանը: Հարսը գիշերը, քնած ժամանակ, նամակը փոխում է—թե կինդ շան լակոտ է ծնել» («Գուլչի խանում») ³³:

«Տղեն գրում է, թե աստված ինչ տվել է—իմն է, պահեցեք (ինձ համար): Հարսը է՛լ նույն կարգով փոխում է, գրում է, թե՛ իմ կնկա ձեռը կտրեցե՛ք, երեսին դռնիցը կապեցեք ու դուրս արեք տանից» («Աֆանասևի բ տարբերակ») ³⁴:

«Թագավորի տղեն ինքն է դրում, թե մինչև իմ գալը դուրս արեք իմ կնոջը, թե չէ, որ ես եկա, կկտրատեմ» (նույնի մեկ այլ տարբերակ) ³⁵:

Վերջապես՝ «գրում է, թե ձեռ չտաք ո՛չ կնոջս, ո՛չ իր ծնած շան լակոտին, մինչև ես գամ: Հարսը նամակաբերի դարձին էլի գիշերը քնած ժամանակ փոխում է, թե՛ իմ կինն ինչ որ ծնել է, շալակը տվեք, դուրս արեք» («Գուլչի խանում») ³⁶:

Ինչպես տեսնում ենք, տարբերակներում իրադարձությունների նկարագրությունները տրված են մերթ ժավալուն ու երկարաշունչ, մերթ խիստ սեղմ ու հակիրճ ձևով: Իր մշակման մեջ Հ. Թումանյանն օգտագործել է տարբերակների մեծամասնության մեջ հանդիպող մանրամասներ՝ հարսի՝ նամակը փոխելը, դա համարելով օրգանական հետևություն վերջինիս կերպարի հետագա զարգացման և առավել տիպական՝ նրա վարքագծի բացահայտման համար: Հավատարիմ մնալով իր գրելաձևին՝ Հ. Թումանյանն առաջ է տանում իր պատումը հանդարտ եղանակով, ժողովրդական խոսելաձևին բնորոշ աշխույժ ու կշռույթավոր տողերով:

«Դու մի ասիլ, էս նամակ տանողը գնում է ճանապարհին հյուր է ընկնում Լուսիկի եղբոր տանը ու գիշերը մնում է նրանց մոտ: Իրիկունը զրույց անելիս պատմում է, թե՛ հապա՛, էսպես-էսպես մի բան է պատահել, ու հիմի աչքավուսի թուղթ եմ տանում թագավորի տղին:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում, էջ 5ա:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

Չար հարսը էստեղ գլխի է ընկնում բանը: Գիշերվա մի ժամանակը վեր է կենում, էս մարդի գրպանից նամակը հանում, կրակը գցում ու ինքը մի նոր նամակ գրում, գնում տեղը: Գրում է, թե՛ հապա չես ասիլ, բու գնալուց ետը կինդ ծնեց՝ մի շան լակոտ բերավ... էսպես խայտառակվեցինք աշխարհի մեջ. հիմի բեղ իմացնում ենք—գրի ինչ անենք, ինչ շանենք:

Սուրհանդակը էս նամակը տանում է տալի թագավորի տղին: Կարգում է թագավորի տղեն ու շատ-շատ վշտանում: Հորն ու մորը նամակ է գրում, թե՛ իմ բախտն էլ երևի էդ է եղել. ինչ որ աստված տվել է—իմն է, պահեցեր, կնկանս էլ մի թթու խոսք չասեք, մինչև ես դամ»³⁷:

Տարբերակներից մեկում Լուսիկին պատահող ծերունին Никола Богосудник-ն է, այլ տարբերակում՝ հրաշագործ, մի այլ տեղ՝ ծերունու կնույարը բացակայում է, և Լուսիկի ձեռքերը հրաշքով միանգամից աճում են, ըստ Գրիմի եղբայրների՝ յոթ տարի անտառում մնալուց հետո, աստծու ողորմությամբ, ձեռքերը նորից են դուրս գալիս, «Անբախտ Մարիամ»-ի տարբերակում «անտառում քնած ժամանակ երազում հայտնվում է աստվածածինը, ձեռք քսում է ու բժշկում, ձեռները դուրս են գալիս»³⁸:

Իր հեքիաթում Հ. Թումանյանն ընտրել է հրաշագործ ծերունու կնույարը, հեքիաթին տալով միայն հեքիաթին հատուկ հրաշապատում երանգ ու խուսափելով տարբերակներում զգացվող կրոնական գունավորումից:

Ահա թե ինչպիսին է հեքիաթի հանգուցալուծումը: Երկու տարբերակներում ամուսինը վերադառնալով, իմանում է ամեն ինչ և անմիջապես, սուանց ձիուց վայր իջնելու, գնում է փնտրելու կնոջն ու երեխային³⁹:

Մի այլ տարբերակում՝ Լուսիկը երեխայի հետ երկար թափառելուց հետո, գալիս է իր հայրենիքը և գիշերելու օթեան խնդրում եղբորից, որը նրան չի ճանաչում: Պատահաբար այդտեղ է գալիս և նրա ամուսինը: Եղբայրը խնդրում է զվարճացնել իրենց. երեխան սկսում է պատմել իրենց կյանքի պատմությունը, և եղբուկները բացվում է⁴⁰:

Մի այլ տեղ հարազատները պատահամբ հայտնվում են հերոսուհու՝ Գուլչի խանումի հարուստ ապարանքում: Վերջինս ճանաչում է նրանց, անում իր պատմությունը և բոլորն իմանում են ճշմարտությունը⁴¹:

Հ. Թումանյանն օգտվել է ամբողջական բնագրի համապատասխան հատվածից, տեղ-տեղ նույնիսկ բառացի: Այստեղ ևս, ինչպես և Հ. Թումանյանի մոտ, նույնն են և՛ թագավորի տղայի ու իր ընկերոջ՝ միասին քարվանսարա պահելը, և՛ աղքատ կնոջն ու իր երեխային ապաստան տալը, և՛ հեքիաթ պատմելու խնդրանքով նրան դիմելը, և՛ նրա պատմած հեքիաթ-եղելությունը, և՛ հարսի՝ անընդհատ նրա պատմությունն ընդմիջելը, և՛ զրպարտված անմեղ քրոջը ճանաչելու տեսարանը: Հեքիաթի հանգուցալուծումը տալով ըստ ամբողջական բնագրի՝ Հ. Թումանյանը ելնում է այն նկատառումից, որ ավելի հուզիչ և հավաստի կլինի հերոսուհու կրած տառապանքները ներկայացնել հենց իր՝ հերոսուհու, և ո՛չ նրա փոքրիկ երեխայի կողմից, որն ամբողջ

37 Հոսի. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 165:

38 ԳԱԹ ԹԱ, № 125, էջ 6:

39 Նույն տեղում, էջ 6ա:

40 Նույն տեղում:

41 Նույն տեղում, էջ 7:

խորոթյամբ չէր կարող ընկալել իր մոր հոգեկան դրաման. վերջինիս կյանքի ողբերգական պատմությունն անելիս, նա միայն անկիրք և անկենդան «արծանադրում» է դեպքերն իրենց հաջորդականությամբ:

Այնուհետև՝ ամբողջական բնագրի՝ «Косоручка»-ի և «Գուլլի խանում»-ի համեմատությունից ակնհայտ կերպով երևում է առաջինի առավելությունը, քանի որ ընթերցողի համար ավելի սրտառուչ, հուզիչ ու ցանկալի է թագավորական բարձունքներից մինչև կյանքի հատակը նետված ցնցոտիապատ մուրացկանի, քան փառքի ու դիրքի հասած շքեղազարդ տիկնոջ արդարացի հաղթանակը շարի դեմ:

Հետաքրքիր է հեքիաթի վերջաբանը: Ամբողջական բնագրում հեքիաթը վերջանում է հետևյալ կերպ.

«Ախպերն ախոռից հանեց ամենալնտիր մատակ ձին, կնկանը պոչիցը կապեց ու բաց թողեց արձակ դաշտում: Էնքան քաշ տվավ, մինչև մի ծամը՝ ընկավ հտ, իրեն տվեց: Կառքը լծեցին, նստեցին ու ճամփա ընկան հորն ու մոր մոտ: Стали жить да поживать, добра наживать. Я там была и мед—вино пила, по усам текло и в рот не попало»⁴²:

Սերբական ժողովրդական երգում, որ նմանապես գրավել է Հ. Թումանյանի ուշադրությունը, գրեթե նույնն է. «Չար հարսին որ ձիու պոչից են կապում ու թողնում. որտեղ արյունը թափեց, էնտեղ եղինչ ու փուշ դուրս եկավ, որտեղ ինքն ընկավ (արտասուքն ընկավ), էնտեղ լիճ գոյացավ. լճի մեջ երկվում էր (ձին սև, բազեն վանդակում) երեխեն օրորոցում ու մոր ձեռները գլխի տակին (под горлом)»⁴³:

Անտիպ պատառիկների և հեքիաթի վերջնական բնագրի համեմատությունը ցույց է տալիս, որ Հ. Թումանյանն իր հեքիաթի վերջաբանը հյուսել է նախորդ երկու տարբերակներից, մի կողմ թողնելով առաջին տարբերակի՝ ռուսական ժողովրդական հեքիաթին բնորոշ զուտ ռուսական վերջաբանը և հատկապես կանոնադրված սերբական լեզվադրված վերջերգի վրա, գտնելով այն ավելի քնարական և առավել ևս հագեցնելով հուզական շեշտերով: Հ. Թումանյանն օգտագործել է հարսին պատժելու՝ երկու տարբերակներում ընդհանուր ձևը, քանի որ հայկական ժողովրդական հեքիաթներում ևս շարը պատժվում է՝ նրան ձիու պոչից կապելով ու դաշտերում բաց թողնելով:

Իսկ շար հարսին կապում են կատաղի ձիու պոչից ու բաց են թողնում արձակ դաշտերում: Որտեղ արյունն է կաթում, էնտեղ փուշ ու տատասկ է դուրս գալի, որտեղ արտասուքն է թափվում, էնտեղ լիճ է գոյանում: Էն լճի խորքում երևում է մի երեխա՝ քնած օրորոցում, դանակը դրած գլխի տակին: Ասում են՝ երևում է և մի վանք. էն վանքում չոքած է մի կին ու լալիս է, լալիս է, անվերջ լալիս է»⁴⁴:

Ինչպես տեսնում ենք, Հ. Թումանյանի «Կենսատ աղջիկը» շահեկանորեն սարքերվելով այդ հեքիաթի բազմաթիվ այլ տարբերակներից, ազատվել է ավելորդ երկարաբանություններից ու նրա գեղարվեստական մտածողության անհարիր ոչ-գեղադիտական հատվածներից, հագեցվել քնարական երանգներով և դարձել կուռ, անթերի և կատարյալ գեղարվեստական գործ:

⁴² Նույն տեղում, էջ 8ա:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Հոգի Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 169:

Հ. Թումանյանի հեքիաթները կարդացվում են այնպես սահուն ու թեթև, որ կարծես գրված են առանց ստեղծագործական տառապանքի, մինչդեռ նա տքնել է ամեն մի բառի ու արտահայտության վրա, մշակել նույնիսկ տպագրվածը: Լեզվի հարցում Հ. Թումանյանի բժախնդրությունը հիշեցնում է Գ. Սունդուկյանին, որը չգիտեր՝ ո՞ր արտահայտությունը գերապատվություն տալ՝ «Ես նրան պաշտում եմ», թե՞ «Ես պաշտում եմ նրան»⁴⁵: Հ. Թումանյանի մասին նրա այրին՝ տիկին Օլգա Թումանյանը, պատմում է. «...Պատահում էր, որ մի հանգի, մի բառի պատճառով ոտանավորը թողնում էր կիսատ. — էս զահրումարը մի բառի պատճառով մնաց...»⁴⁶:

Հ. Թումանյանը ձգտել է տիրող «հյուսիսափայլյան» անկենդան լեզուն հարստացնել ժողովրդական խոսակցական լեզվի ընտիր բառուբանով, որն ավելի կենդանի և աշխույժ կղարձներ գեղարվեստական ստեղծագործության և, մասնավորապես, հեքիաթի լեզուն: Այդ կապակցությամբ նա հավաքում է ժողովրդական լեզվին բնորոշ բառեր ու արտահայտություններ՝ հետագայում իր հեքիաթներում օգտագործելու նպատակով: Դրանցից մի քանիսը պահվում են բանաստեղծի ձեռագրերում⁴⁷:

Անտիպ պատառիկներից պարզվում է, որ Հ. Թումանյանը գրի է առել կենդանի խոսքի մի քանի հետաքրքիր նմուշ, ինչպես նաև հեքիաթներին բնորոշ արտահայտություններ, որոնք նա առանձնացրել է ժողովրդական հեքիաթների սկզբնաղբյուրներից:

Բերենք դրանցից մի քանիսը, նշելով նախ՝ Հ. Թումանյանի բնագիրը, ապա՝ ժողովրդական հեքիաթի համապատասխան հատվածը.

Հ. Թումանյանի բնագիրը. «Ես լեռները որսի կերթամ, որսն իմ տունն է եկել (դւր)»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «...ես լեռներ նեճիրի կերթամ, նեճիր իմ տունն է էկեր»⁴⁸:

Հ. Թումանյանի բնագիրը. «(ջուրը կընկնեմ) կըլնեմ ձկան ընկեր, հավքերի կեր...»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «...ձկան ընկեր կլինիմ կամ հավքերուն կեր»⁴⁹:

Հ. Թումանյանի բնագիրը. «Գիշեր-ցերեկ կծկողին որ խնդրում է, թե թող գիշերը երկարի, ասում է. «Չէ՛, որդիս, հիվանդ կա, մեռել կա, նրանց լուս է պետք»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «—Վա՛յ, ճանիկս մամա՛, սևը ապուլ տուր (արձակիր—Ա. Վ.)՝ ճերմակը կծկե, խտա տեղը բան ունիմ, էրթամ բանս լմնցունեմ, վերջը ճերմակը ապուլ կուտաս»:

— Չէ՛, պալա՛ս,— կասե պառավը,— հիվանդներ ու մեռելներ կա. նացա լուս պետք է...»⁵⁰:

45 Շիրվանդադե, Երկեր, հ. 8, Երևան, 1961, էջ 212:

46 «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 329:

47 ԳԱԹ ԹԱ, № 145:

48 Գ. Սրվանձատյան, նշվ. աշխ., էջ 135:

49 Նույն տեղում, էջ 139:

50 Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, դիրք 7, Թիֆլիս, 1891, էջ 52:

Նույն մոտիվը տե՛ս նաև «Զուլալ աստղ, և Նուան հատ և Ոսկեծամ»⁵¹, «Կրակոտ ոսպ»⁵² և «Պատիկ Միրզան և Դե Գորդոշան»⁵³ հեքիաթներում:

Հ. Թումանյանի բնագիրը. «40 դեերը մի-մի ծանր շերեփ առած խառնում են մի մեծ պղինձ գիշերվա մթնում ու ասում—ինչպես մենք խառնում ենք, այնպես էլ թող թագավորի աղջիկների սրտերը խառնվեն իրենց փորերում (չատու ենք անում, ուզում ենք թագավորի աղջիկներին)»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «Տղան կելլե կերթա հեռու կրակին կհասնի, ի՞նչ կտեսնե—մեկ հատ քառսուն անկաճով խալկին (կաթսա—Ա. Վ.), չորս դին ալ քառսուն հատ դե, ամենին ձեռքին ալ մեկ-մեկ հատ շերեք, նստիլ ին, կխառնին ու կասին. «Ինչպես կխառնինք նե՛ թագավորին աղջիկներուն սիրտերը փորերը թո՛ր խառնվի...»⁵⁴: Ճատու կանինք, թագավորին աղջիկները առնիլ կուղինք»⁵⁵:

Հ. Թումանյանի բնագիրը. «—Ետ կաց, ով գիտի, ինչ մահի ետևից ես լինում»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «—...վո՛վ գիտնա, ո՛ր մահին էտեեն կերթաս...»⁵⁶:

Հ. Թումանյանի բնագիրը. «—Բարի լինի:

— Բարին ու շար խառնվել են իրար»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «—Հա՛, —սուաց, —խե՛ր ա, տղա, դո՛ւ էս տեղրանք:

— Խեր ու շառ խառվե իրար...»⁵⁷:

Հ. Թումանյանի բնագիրը. «—Երեք ոչխար կգան—սև, կարմիր, սպիտակ. քեզ կգցես սեին, նա կտա կարմիրն, կարմիրը՝ սիպտակին, սիպտակը լիս աշխարհ կհանի»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «—Մըկ էլ կտեսնաս՝ իրեք ոչխար էկան, մինը՝ սև, մինը՝ սիպտակ, մինը՝ կարմիր... Դու քեզ կգցես աղաք սեի վրեն, սևը կգցի կարմրի վրեն, սիպտակն էլ քեզ լիս աշխարհ կհանի...»⁵⁸:

Նույն մոտիվը կա նաև «Ուստա Մուրատ»⁵⁹, «Նաշար-օղլու հեքիաթը»⁶⁰, «Կտրիճ և դե»⁶¹ և այլ հեքիաթներում:

Հ. Թումանյանի բնագիրը. «Առաջը կանգնեց, օխտը հետ գլուխ տվեց, վրա ութը ձեռը խաչեց, կանգնեց»:

Ժողովրդական հեքիաթի տեքստը. «...օխտը տեղ թամալլահ էրավ, վրա ութին թագավորի փեշը համբուրեց ու ձեռները բարե բռնեց կայնավ»⁶²:

⁵¹ «Համիսյան ազգագրական ժողովածու», Բ, Մոսկվա—Վաղարշապատ, 1901, էջ 325—326:

⁵² Նույն տեղում, էջ 219:

⁵³ Գ. Սրվանձտյան, Նշվ. աշխ., էջ 166—167:

⁵⁴ Տ. Նավասարդյան, Նշվ. աշխ., էջ 52—53:

⁵⁵ Նույն տեղում, էջ 53:

⁵⁶ Նույն տեղում, էջ 57:

⁵⁷ «Համիսյան ազգագրական ժողովածու», Բ, էջ 364:

⁵⁸ Տ. Նավասարդյան, Նշվ. աշխ., գիրք 2, Երևան, 1882, էջ 12:

⁵⁹ «Համիսյան ազգագրական ժողովածու», Բ, էջ 365:

⁶⁰ Ե. Լալայան, Մարգարիտներ հայ բանահյուսության, Բ, Թիֆլիս—Վաղարշապատ, էջ 49:

⁶¹ «Վանա սազ», կազմեց Գ. Շերենց, Բ, Թիֆլիս, 1899, էջ 122:

⁶² «Համիսյան ազգագրական ժողովածու», Ա, Մոսկվա—Ալեքսանդրապոլ, 1901, էջ 7:

նույնը նաև՝ «Սմալոն թագավորը և Դյուլը»⁶³, «Հաղարան բիլբուլ»⁶⁴ և «Ղափհրաման և Ասլան թագավորներ»⁶⁵ հեքիաթներում:

Հ. Թումանյանը գրի է առել նաև հետևյալ արտահայտությունները, որոնք հանդիպում են գրեթե բոլոր հեքիաթներում.

«Հիմի ետ գանք թագավորի տղի մոտ:

Դնում է, գնում է, գլուխներդ ինչ ցավացնեմ:

Ուրախանաս, ինչ սրանք ուրախանում են»⁶⁶:

Ինչ խոսք, նմանօրինակ արտահայտությունների ներմուծման շնորհիվ է, որ հեքիաթը դառնում է դինամիկ, համով-հոտով, և հեքիաթագիրը վերափոխվում է մի յուրօրինակ հեքիաթասաց իմաստուն ծերունու, որին նույն անհամբեր հետաքրքրությամբ ու սիրով են դիմում և՛ մանուկը, և՛ մեծահասակը: Ահա թե ինչու այնքան քիչ հեքիաթագիր է բռնել ժամանակի քննությունը և տեղ գրավել գրականության պատմության մեջ. և այնքան աեռին է Հ. Թումանյանի գիտողությունը. «Կարծում են՝ հեշա բան է հեքիաթ մշակելը: Դրիմաները հազրվ՝ մի քանի հեքիաթ ունեն մշակված: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղավաղած ու փչացրած»⁶⁷:

Հ. Թումանյանի հեքիաթների առաջին իսկ տողերից զգացվում է մեծ արվեստագետի տաղանդի թափը («Քաջ նաղար», «Բարեկենդանը», «Սուտլիկ որսկանը», «Կիկոսի մահը», «Չախչախ թագավորը» և շատ ուրիշներ), և երբեք նրան չի կարելի շփոթել այլ հեքիաթագրի հետ:

ЧЕРНОВЫЕ ОТРЫВКИ СКАЗОК ОВАНЕСА ТУМАНЯНА

АНАИТ ВАРТАНЯН

Резюме

Сказки занимают особое место в литературном наследии О. Туманяна. Некоторые неопубликованные материалы из его архива являют, что он глубоко осознавал тесную связь между литературой и фольклором. О. Туманян, обрабатывая сказку, собирал многочисленные варианты последней, причем образцы фольклора не только армянского, но и кавказских и других народов и, проявляя к ним особый творческий подход, создавал качественно новые, более совершенные произведения.

О. Туманян серьезно относился и к вопросу языка сказок, стремясь обогатить его лексикой разговорного языка.

А посему сказки О. Туманяна не просто обработки фольклора, а обработки, которые народную простую сказку делают гениальным литературным произведением.

⁶³ Նույն տեղում, Դ, Մոսկվա—Հաղարշապատ, 1902, էջ 265:

⁶⁴ Նույն տեղում, էջ 358:

⁶⁵ Նույն տեղում, էջ 280:

⁶⁶ ԳԱԲ ԲԱ, № 145:

⁶⁷ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, էջ 472: